## 81. ԹԱԶԱ ՓԸՍԱԾ ԽԸԽՈՐՑԸ ՀԵՏԵ

Մեհետ մին քանի խոխա մին տեղավ քյնիյիս ըն ինում, ուրանց հետե խաղ ընելավ։ Քյնում ըն մին բախճի պտահում։ Ըտեղ շատ տանձը-խնձորու ծառեր ա ինում։ Ծրռերան խնձոր, տանձ ըն քաղըմ, օտում, ծրռերեն տաքերը կուարատում, թա.— Ըստրա տրեռնը, ըստինը, ընդինը, էս խե՞ մերը չի, ասըմ ըն, փախչում, թա քյինին ուրանց տոնը։

Էտ վախտը տրանց առաչին մին պառավ մարթ հղենի քյնում ա ընում, շատ ծրավածա։

Էտ խոխեքյը վեր քյինում ըն, հանում էտ պռավեն, պառավըն ասում ա.— Ա՛ վերթիքյ, մին վետը կացեքյ, բալքյամ ծեր ծեռքեն ճուր ընի՞, բալքյամ ըստեղաս մոտե ճուր կա, ախեր պերանս չուրացալ ա, կարըմ չըմ քյինիմ։

Էտ խոսցան մինը ասում ա.— Դա՛յի, նստե։

Նստում ա, ջուբան մին խնձոր ա տուս օնում, տամ էտ պռավեն։ Պառավը օտում ա, համ ծարավութունն ա քաշում, համ էլ էտ խնձորը ընդրան շատ ա տուր կյամ։ Խնձորը վեր օտում ա, պըրծնում, տափը մաննավ քանդում ա, էտ կորեզը քցում ըտեղ, վրեղավ անում։

Խոխերքը ասում ըն.— Դայի, խե՞ յրս իտի անում։

Դային ասում ա.— Բա՛լա, էս խնձորի ծառը վրողեն մատաղ, ղորմի ընդրան, ծրվութունրս քաշից, էտ մին, էրկունջինն էլ շատ համեղ ար, յրես էլ ըստեղ վարիմ, մին խնձորե փանե, հանցու մին դոնում մրեղ նման մինն էլ կյա ծրավածա օտե, մրեղ ղորմի տա։

Խխոցան մինը ասում ա.— Դա՛յի, պա տու էնքան կննական ը՞ս, վեր էտ սերմը ծառ տեռած տեսնաս։

Դային ասում ա. — Բա՛լա, վարալ ըն կերալ ընք, վարինքյ, հանցու օտին։ Մունք ըիդի մըզանա ետը եկածներեն հետե շատ պեն թողինքյ, հունցը մեր պապերն ըն մըեղ հետե թողալ, քյեցալ։

Շատ ա ընցնում, թա՜ խրեգյ, էտ խխոցան մինը մեծ մարթ տեռած, հիվանդացած ա ընում։ Տանըմ ըն դոխտուր։ Ետ տեռած կյա՜լիս արևը կրծանում ա։ Կյա՜մ ըն հըղրցեն ղրաղեն տեսնում մին խընձո՜րե։ Տակեն նստում ըն, դինջա՜նում։

Պըռավեն խրելքը կլո՜խն ա կյամ, եր ա կենում տեղը նստում, տեսնում էտ խնձո՜րեն էն ծառն ա, վեր ինքյը խընձո՜ր ա տվալ ճընապավը քյնա՜ցող հլվերեն, էն էլ կորինձը տընգալ ա։

Մեննը ընգելավ ընդրան խոսկերքը, ասում ա.— Պա՜, ղորմի քյըեղ հա՜, ա՛ ծառ վարող, վրսկռնետ լուս տեռնա։